ՆՈՐ-ԴԱՐ

№ 6 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 15 Յունուարի 1898 Հինգշաբթի, 15 Յունուարի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 6

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատ՝ 5 կ.
Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուրբաթ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը նոր կեանք 1898-ին հրատարակւում է Թիֆլիսում նոյն ձեւով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և ուրեներին հետեւող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի։ Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵՒՐՈՊԱՅի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅի բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում միմիայն «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Լորիս-Մելիքեան փողոցում, պատհեռագրատան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեան այս հասցէով՝ Тифлисъ, въ редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis, Caucase, rédaction de journal «Nor-Dar»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Էջմիածնի կրած նիւթական մեծ կորուստը։

Քրոնիկոն. — Լուրեր։

Մեզ գրում են.— Ս. Էջմիածնից, Մոսկուայից, Ալաքլաքլից, Դանձակից։

Հայոց Թատրոն Բագուում։

Քաղաքական. — Թուրքիա։ Դրայֆուս-Էսթերհազիի գործը։

Հեռագրներ։

«Նոր-Դար»-ի պատասխաններ։

Բանասիրական. — Փիլիսոփայութիւնը և ժողովրդի դատարակութիւնը։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԻԼԻՍՓՈՓՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՍԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(Gabriel S'ailles)

I.

Ես նպատակ ունիմ ձեզ կարդալ, բացատրելու մի քանի ընթերը էջեր այն դիտաւոր փիլիսոփաներից, որոնք իրենց խորհրդածութեանց արդիւնքն են արտայայտած կեանքի, պատահականութեան և այլ այն բոլոր հրատապ խնդիրների մասին, որոնք մեր և ոչ մէկիս աչքին են խուտուտած, հետաքրքր և մեղնից ամեն ոք, թէ գիտուն և թէ տգէտ, իւր տեսակէտն է դատում։

Ինձ համար մեծ հաճոյք է դրուցատրել գործաւորների հետ։ Այս «ՄԻՈՒԹԵԱՆ» հիմնական մտածումներից մէկն է ճշմարիտ բարիքները և ոչ մէկին պատիկ։

Այսպէսի մի ձեռնարկ, բնական է, որ ամէն կողմերից քննադատութեանց պիտի ենթարկուի։ Ամենք այդ բանը գուցէ ցնորական համարեն, ոմանք էլ՝ վտանգաւոր։ Սկեպտիկականները*) փիլիսոփանե-

*) *Սկեպտականութիւնը* (scepticisme) ծագում է յունական skeptomai (քննել) բառից։ Մի վարդապետութիւն, որի էութիւնն կայանում էր կասկածելու մէջ. վասն զի սկեպտիկականը քննադատում էր առանց վերջին եզրակացութեան յանգելու, պատճառելով որ մարդս չի կարող ճշմարտութիւնը ստուգիւ գիտենալ։

Թարգմ.

Թիֆլիս, 14 յունուարի 1898 թ.

ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐԱԾ ՆԻՒԹԱԿԱՆ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏԸ

—

Պոլսում հայերէն լեզուով այժմս լոյս տեսնող թերթերից մէկին՝ «Բիւզանդիոն»-ին մեր կողմերից (Թիֆլիսից) գրել են, որ Էջմիածնի դանձարանը կողոպտուած է, կողոպտողները 200,000 րուբլի (կարդացէք *երկու հարիւր հազար* րուբլի) են կողոպտել։

Էլ ինչ է մնացել Էջմիածնի դանձարանում, «Բիւզանդիոն»-ին չեն հաղորդել. միայն կողոպտողների անուններն են յայտնել։

Այդ անուններից մենք խմա-

նում ենք, որ կողոպտիչներից մէկը՝ Էջմիածնի միաբան, քահանայ և մեզ լաւ ծանօթ մի վարդապետ է։

Սոյն համարի քրոնիկոնի բաժնում մենք հրատարակում ենք Էջմիածնից մեր թղթակցի մի հեռագիրը. բայց մենք հեռագիրը չըստացած էլ գիտէինք թէ բանը ինչումն է, քանի որ այդ չիշեալ մեծ գումարը «կողոպտողներին» թուում յիշուած էր և ծանօթ վարդապետի անունը։

Կ. Պոլսի թերթերը վաղուց է, որ սովորել են մեր երկրի և մեր գործերի մասին սուտ, շատ անգամ ծիծաղ շարժող լուրեր և չը կատարուած ու անկարելի գործերի նկարագրութիւններ հաղորդել։

Մեր փողոցային մամուլը հայհոյելով, հոս-հոս անուանելով թրքահայերին և թրքահայոց մամուլը՝ վարժեցրեց նրանց իւր արհեստին։

Բարեբաղդաբար Թիւրքիայի հայերն ընդհանրապէս և Պոլսինը մասնաւորապէս հատարակական գործերում աւելի հասկացող են, աւելի ըմբռնողութեան ընդունակութիւն ունին և աւելի զարգացած են, քան մեր կողմի հայերը։

Այդ պատճառով թրքահայոց թերթերը վերը յիշած սուտ լուրերով չեն կարող մոլորեցնել հասարակութեան միտքը։ Բաւական է որ Պոլսում տեղեակ լինին

էջմիածնի ընթացիկ ղէպքերի և անցքերի հետ, իսկոյն կը հասկանան թէ ինչու համար հարկաւոր է եղել էջմիածնի գանձարանը կողոպտուած հրատարակել և «կողոպտողների» վրայ էլ մատնացոյց լինել...

Աւելորդ է ասել, որ էջմիածնի գանձարանում չէր կարող 200 հազար րուբլի փող գրուած լինել, քանի որ եթէ մեծ գումարներ լինեն, պէտք է որ չահով տրուին կամ տոկոսաբեր արժէթղթեր գնուեն։ Այնուհետև պէտք է խմանալ, որ գանձարանը Սինոդի իշխանութեան տակ է գտնւում և ինչ փոփոխութեան էլ որ ենթարկուի գանձարանը, դրա ելից և մտից հաշիւն անցնում է ս. սինոդի և պրոկուրորի հսկողութեան տակ։

Կարող է պատահել, որ «գանձարանը գանձապետն ինքը անբսպաս կողոպտում է» կամ գուցէ անյայտ չարագործները (Պոլսում արդէն յայտնի են գրանք) գիշերը կոտրում և մտնում են գանձարանը և կողոպտում... Այդպիսի բան որ կատարուած լինէը, մի՛թէ սինոդը, պրոկուրորը կը լռէին. մի՛թէ այդ լուրը մենք պիտի առանայինք Պոլսից։

Եթէ արդարև մի որ և է դժուարութիւն տեղի է ունեցել, դա չի կարող էջմիածնի գանձարանին վերաբերել, եթէ կողոպտող եղել է, դա չի կարող այնպիսի մի բա-

ընթիզճ հոգևորականը լինել, որի անունը «Բիւզանդիոն» առանց քաշուելու հրատարակել է։

Պոլսում հրատարակելու համար այդ տեսակ անբարեխիղճ լուրեր հաղորդողներն իրենք լաւ գիտեն թէ ինչ են ուզում։

Դրանք ուզում են հասարակութեան միտքը մոլորեցնել և նրա մտքին այլ ընթացք տալ։

Ով ինչ ուզում է՝ թող տայ, բայց մեր ժողովուրդը եկեղեցական ժողովուրդ է և շատ է սիրում զբաղուել իւր եկեղեցականներով, և իրեն համար հետաքրքիր է հոգևորականութեան մէջ է որոնում, այնպէս որ ըօրդևրօ-ները էլ մեզ մօտ կրօնաւորի գրած են լինում... այդ տեսակ բաները չի կարելի ոչնչացնել, մոռացնել տալ նոյն իսկ—երկու հարիւր հազար րուբլու արևակայեալ կորուստով։

ՔՐՈՆԻԿՈՆ

Այսօր, յունուարի 15-ին, Թիֆլիսի հայ հասարակութիւնն ուրախութեան բաղդ ունի իւր մէջ ուներու ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը։ Ս. Էջմիածինը միշտ մեծ հոգով է տօնել իւր Հայրապետների անուանակոչութեան օրը. Թիֆլիսն անշուշտ չետ չի մնալ ս. Էջմիածնից։

Նորին Օծութեանը երկար

---

*) *Սկեպտականութիւնը* (scepticisme) ծագում է յունական skeptomai (քննել) բառից։ Մի վարդապետութիւն, որի էութիւնն կայանում էր կասկածելու մէջ. վասն զի սկեպտիկականը քննադատում էր առանց վերջին եզրակացութեան յանգելու, պատճառելով որ մարդս չի կարող ճշմարտութիւնը ստուգիւ գիտենալ։

Թարգմ.

ըի մի լաւատեսութիւն պիտի տեսնեն այդ բանի մէջ.—մի պատրանք՝ թէ մարդս բանական կենդանի է։ Խոհեմ ու քաղաքավար անձինք նրբը պիտի ցաւին բանա կանութեան և խորհրդածութեան՝ անհատի նախաձեռնութեան կոչում, անմիջ այս ձայնից, որ կարող է գայթեցնել մարդ կենդանու ազատով գնացքը այն ճանապարհից, ուր սովորութիւնը և աւանդութիւնը գծել են զէպի նախատեսուած նպատակները։

Ամենից առաջ կարևոր է պարզել թէ ինչ է այս դասախօսութեան նպատակը, որի համար սակայն կուզէի աւելի հաստ՝ զրուցասրութիւն բառը գործածել։

Բարոյական կեանքը մի խիստ բարդ կեանք է, որ դպրոցի, ընտանիքի, ընկերութեան և անհատի գործակցութիւնն է պահանջում։ Բարոյական կեանքը հատուածաբար հետաքրքրում է թէ իմացականութիւնը, թէ սիրտը, թէ եղեակայութիւնը, թէ կամքը և թէ բոլոր այն կարողութիւնները, որ վերլուծութիւնը դասում է, բայց որոնք իրօք իրարից երբէք չեն բաժանում և ամէն րոպէ միանում են նրբերին կեանքի մէջ։ Մենք յատկնութիւն չունինք առաքինութիւնը մէկ բանաձևով ներկայացնել։ Մոզական խօսքերին հատատացողներից էլ չենք։ Մենք գիտենք որ մի ճշմարտութիւն միայն այն ժամանակ բարոյական ճշմարտութիւն է, երբ նա ընդհանուրի սեպհականութիւնն է դարձած. երբ այդ զաղափարը սերտ կերպով կապուած է մեր կեանքի

հետ, երբ նա մեր սեպհական մտածմանքի կենդանի և գործօն տարը լինի և բնական՝ եթէ կարելի է այսպէս ասել, նոյն իսկ մեր մարմնի մէջ։

Զաղափարվութիւն, բնազանցական աւելորդ խօսքեր պէտք չեն։ Մենք այստեղ հաւաքուած ենք, որպէս զի մեր մարդկային վաստակը կատարենք։ Հետաքրքրուենք մեզ չահագրգռող բոլոր խնդիրներով,—թէ մենք ինչ պիտի ցանկանանք, ինչ պիտի լինինք և խորհրդակցենք ուղղամտօրէն և անկեղծ կերպով՝ մեզ նման մարդոց հետ, որոնց վրայ կարող ենք վստահիլ՝ առանց կեղծ հասկանութեան, առանց հրաժարուելու մեր սեպհական և ազատ դատողութիւնից, որովհետև նրանք և՛ աւելի ճշմարիտ մարդիկ են եղած. որովհետև մեր իսկ բանականութիւնն է որ ազդու, կենդանի և ներկայ է յանձին նրանց, վասնզի նրանք զօրավիգ կը լինին մեզ աւելի լաւ ճանչցնելու՝ մեր պատկերը և՛ աւելի մեծացած յետս դարձնելով։

Մենք մեռեալ բանաձևի, կաղմելու կարիք չունինք։—Յանկանում ենք մեր սեպհական խղճմտանքը արթնցնել՝ ուրիշ օրինակ բռնելով։ Անցեալի մէջ յաւիտենականութիւնն է որ մեզ հետաքրքրում է և մենք օգնութեան ենք կանչում նրանց, որոնք աւելի լաւ են մտածել ու լաւ էլ ապրել. այդպիսիներն են՝ Պղատոն, Էպիկտէտ, Մարկոս—Աւրելիոս, Դեկարտ և Սալինօզա։ Այդ կերպով մենք կարող ենք նրանց հետ խօսակցել և

հրաւիրել այս զրուցատրութիւններից մէկին, որ նրանցից մէկի խօսքին համաձայն. «նրանք իրենց մտածմանց լաւագոյնները մեզի կը յայտնեն»։ Ինչ որ մեզ հարկաւոր է, այդ ոչ այնքան նրանց ներքին կենաց գաղտնիքն է, որքան բարոյական այն բարձր ներշնչութիւնը, որ նրանց չանքը պահպանել յարատև է դարձրել։

Ճշմարիտը խօսելով՝ մի նոր բան չէ անհատական իղձին կոչում անելը, բայց ինդիրը կարծուած էն աւելի ընդարձակ է. վասնզի նա միայն մի մասնաւոր դէպք է, մի կողմը այն մեծ ինդրի, որ ներկայ ժամանակը չանք է անում լուծել, այդ է՝ ժողովրդի բարոյական Դաստիարակութիւնը։ Հասարակապետութիւնը չի կարող համակերպել տգիտութեանը, ամբոխի անշարժութեանը, նա պէտք է որ բանականութիւնը ամէնքի մէջ արթնցնէ, լուսաղբիւրների և կրթհաստատների մտածմունքը ամէնքիս հաղորդէ։

—Բայց մեզ կարող են ասել՝ թէ դա ցնորք է, թէ դուք անկարելին էք ուզում և բնաւ հաշուի չէք առնում տարբերութիւնները. հնթադրում էք մի վերացական էակ և նրան տալիս այն յատկութիւնները, որոնք ձեզ հաճելի են, իրականում, կենճատ, բազմազիմի, լի հակասութիւններով և ընդդիմութիւններով ընկերութիւնը դուք զեռևում էք ուրուականների մի ցնորական աշխարհի մէջ, որ ձեզ չի ընդդիմադրում, զի ձեր երազումն էք ստեղծել։—Թողէք ընդհանուր

դաղափարները, աչքի առաջ ունեցէք այն գործաւորները, որոնց մտից ամէն օր անցնում էք փողոցի միջով, դիտեցէք նրանց չարժուածքները, խօսքերն ու չեշտը։ Հետեցէք նրանց իրենց աշխատանոցի և գործարանի մէջ։ Ինչ առնչութիւն կայ նրանց և ձեր մտացածին փիլիսոփաների միջև, որոնք աշխարհս մէջ մտածման միայն մի առարկայ են տեսնում և որոնց կրքերը ամոքելու համար, բաւական է միայն իրենց իմացականութիւնը գործադրութեան մէջ դնել, և այն մարդկիկները՝ որոնք օրն ի բուն առաւօտում են նիւթի հետ, իրենց ընկերական դրութեամբը դատապարտած են ամենածանր աշխատանքների, չունին ոչ պարապ ժամ և ոչ էլ մտածման ճաշակ. որոնք շատ քիչ են մտածում իրենց չգիտցած գիտութեանց նկատմամբ և իրենց ընդարմացումից սթափում են միայն հատարակական հատուածների և գինետուների մէջ բուռն զրգռումներ որոնելու համար։

—Պարոններ, ձէ մի բան այնքան գիւրին չէ, որքան գտնել այնպիսի փաստեր, որոնք մեծատոհմի ձեռներէցութեանց արգելք լինէին. ով որ մի ուղղութեամբ իդէալ է գծած, նրա դէմ դուրս կգան իրողութիւնները, առնուազն այն չարիքները, որոնց գոյութիւնը կուզէր առաջարկել։ Միայն փորձառութիւնը ի նկատի առնելով, այնպիսին միշտ կը սխալի, զի դեռ գոյութիւն չունեցող բան է իւր ցանկացածը։ Բայց միթէ ճակատագրի

կեսից ինչ բան բաժանվեր հետ-
յալից սկսելով ամեն ինչ ես
պատրաստ եմ ի նպաստ ձեր
ծրագրի։

«Berliner Tageblatt»-ի դ. գրում
են Հռոմից, թե «Հայոց հշշան-
ների միության խորհուրդը և
նրա գործադիր հանձնաժողովը
հաստատել են Ամերիկայի Միաց-
յալ Նահանգների հայ գաղութնե-
րի կազմակերպությունը։ Այդ
կազմակերպության նպատակն է
հայ գաղթականներին ամերիկա-
ցիների հետ միացնել, որպեսզի
նրանք ավելի հեշտությամբ կա-
րողանան ամերիկացիների հետ
միասին ապրել։ Ամերիկայի հայ
գաղութների կազմակերպության
համար հաստատված է 27-ի
չափ կանոնադրություն։ Նրանց
մեջ ամենից կարևորը հետևյալն
է. ամեն մի գաղութ պետք է
ունենա մի ներկայացուցիչ, որ
կոչվում է «Ներկայացուցիչ»։
Ներկայացուցիչները ընտրվում
են ամեն տարի։ Ներկայացուցիչ-
ների ժողովը կազմում է գործա-
դիր հանձնաժողով, որի նստա-
րանը Նյու-Յորքում է։ Գործա-
դիր հանձնաժողովի անդամնե-
րը ընտրվում են ամեն տարի։
Ներկայացուցիչների ժողովը
պետք է ամեն տարի մի անգամ
ժողովվի։ Ներկայացուցիչների
ժողովի նստարանը կարող է
փոխվել ըստ ժողովի որոշման։
Ներկայացուցիչների ժողովը
կարող է ընտրել ամեն տարի
մի նոր գործադիր հանձնաժո-
ղով, կամ էլ հին գործադիր
հանձնաժողովին թողնել իր
պաշտոնի վրա։ Ներկայացուցիչ-
ների ժողովը կարող է նաև
փոխել գործադիր հանձնաժո-
ղովի նստարանը։ Ներկայացու-
ցիչ

դուսը գլոխց կողպէքով կողպել էին։ 8 օրից յետոյ հարևան կինը նկատում է, որ Սարգսի հաւերը սովից կոտորուել են, յայտնում է հարևաններին, սպանուածի դուռը կոտրում նրա են մանում և տեսնում են ծերունուն վկից պինդ կապած փալասով խեղդամահ արած։ Տանուտէրն արձանագրութիւն է կազմել և ուղարկել է պրիստաւին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. — Դաւառս բազմաթիւ հայ գիւղերը մնում են առանց քահանայի, ժողովուրդը զրկուած է հոգևոր միխիթարութիւններից։ Չատ գիւղեր էլ կան, որոնց քահանաները զառամեալ հասակի մէջ լինելով անկարող են իրենց պաշտօնը կատարել։ Մէկ քահանան չի կարող հոգալ չորս գիւղի հոգևոր կարիքները։ Աւելացնենք սրա վրայ այն տղերի դրութիւնը, որ Չաւախքի ցըրտաշունչ հողմը, բուք ու բոլանը բազմիցս խոչնդոտ են հանդիսանում գիւղացոց-երեխեքութեանը, գիմումները անելու զրացի գիւղական քահանաներին։ Առանց քահանայի մնում են հեռանալ գիւղերը՝ Արուլ, Ալթաման, Ազարվէթ և այլն։

«Նոր-Դար»-ի առաջիկայ համարը լոյս կըտեսնի շարաթ օրը՝ յունուարի 17-ին։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ ԲԱԴՒՈՒՄ

«Արտոյտ», «Օտարներ», «Գկպո» և «Օսկան Պետրովիչը գժոխքում»։

—

«Արտոյտ», ներկայացմանը (տ. Աւետեանի նոպատին) տարաթախտարար չկարողացանք ներկայ լինել, քաղաքիցս բացակայելու պատճառով, ուստի և ոչինչ չենք կարող ասել ոչ գրուածքի գաղափարի և ոչ էլ գերասանների խաղի մասին։ Միայն խորհուրդ կը տանք մի քանի պարոնների, որ չափազանց իրենց համակրութեան արտայայտութիւնը դէպի բնիկ-ֆիզիկանները, չափազանցութիւնները փոխանակ բարձրացնելու, նսեմացնում են ամէն մի դերասանուհու և դերասանի ծափերի են արժանում։

«Օտարներ» յունի կոմիզեան խումբը երկրորդից յունուարի 3-ին այն փոփոխութեամբ սակայն, որ Կոստանդնի դէր Բոլցեան և բաւականին հնորհակալ դերն այս անգամ կատարում էր մի նոր թատերասէր՝ պ. Յով. Ալաջալեան։ «Օտարների» գաղափարի բացատրութեանը։ Տալանդաւոր կոմիկի խաղի քննութիւնն էլ կը թողնենք, սրովհետև առաջին ներկայացման ժամանակ խոսել ենք արդէն։ Սակայն փորը ի չաէ կանգ կառնենք պ. Ալաջալեանի խաղի վրայ որ ունէր մի քանի հետաքրքրական կողմեր։ Պարոնի խաղն ընդհանուր առմամբ գոհացուցիչ էր։ Խոսում է նոր հիսլայով առանց ձայնի և արտաքին ձեևերի ու շարժմունքների մէջ չատերին յաջողել կեղծիքները երևան հանելու։ Երևում էր որ լաւ ըմբռնել է դերի բնաւորութեան մի գլխաւոր կողմը։ Նա Կոստ. գը Բոլցեին դուրս բերեց լրջի չհամաձէր, լղէացներից զուրկ և առհասարակ բարոյական սրբութիւնները ոտնակոխ անող մի տիպ. լրջի ներկայացուցիչ մի որոշ ուղղութեան, նիհիլական ապատովութեան համար նեղ ու դատապարտելի սկզբունքներով գինուած մի անձնաւորութիւն. սակայն գը Բոլցեու որդու մէջ կայ անպայման փառութիւն, փքռնատութիւն, որ նրա ամեն մի արտաքին շարժման և նեղքին հոգեկան կարզութիւնների մէջ է արտայայտւում։ Այս կէսը բոլորովին բացակայ էր պ. Ալաջալեանի խաղից, մինչդեռ դերին ամբողջական ըմբռնման համար անհրաժեշտ և հարկաւոր էր այդ կէսը։ Չևերը մի մկան և չարժմունքները բաւարար էին, բայց մի գլխաւոր պակասութիւն ունի պարոնը և տարաբախտարար այդ պակասութիւնն անուղղելի է. այդ պակասութիւնը ձայնի թոյլ ու նուազ լինելն է։ Դերասանի կենդը ձայնն է ներքին կարզութեան հետ զուգորդուած։ Այդ է պատճառը, որ պ. Ալաջալեանը եթէ նոյն իսկ բոլորովին նուիրուի լսմին, այնուամենայնիւ առանձնապէս աչքի ընկնող սիրտաը և joune prémier չի կարող լինել ի բաց թողած մի քանի այլ հանգամանքներ։ Չնայած նոյն թերութիւններին, այնուամենայնիւ, ինչպէս յիշատակեցինք, Ալաջալեանը տպաւորութիւն թողել։

«Գկպո» կոմեդիա-լ ներկայացումը յատուկ հրաւիրատ Պ. Տէր-Դաւթեանի մասնակցութեամբ այնպիսի բազմութիւն էր գրաւել թատրոնը, որ չէր եղած մինչև օրս։ «Գկպոն» էլ խաղացւում է երկրորդ անգամ, այնպէս որ մեր առաջուայ տաժը չենք կրկնում այս անգամ։ Ըստ պարզ է, որ խաղի ամբողջական տպաւորութիւնը լաւ կը լինէր, քանի որ ներկայացմանն այնպիսի մի հազուագիւտ (մեր մէջ, ի հարկէ) տաղանդ էր մասնակցում, որպիսին է Պ. Տէր-Դաւթեանը։ Տաղանդաւոր կոմիկի խաղի քննութիւնը մենք չենք տալիս, սրովհետև Թիֆլիսում նոր օրերս նոյն դերը խաղացել և ըստ արժանւոյն գնահատուել է այդ դերում։ Բաւական է յիշել, որ մինչև օրս ոչ մի Գկպօ չենք ունեցել Պ. Տէր-Դաւթեանի նման։ Այդ դերի մէջ Պ. Տէր-Դաւթեանն իսկ ոչ անհնար էր, ինչպէս նկատել էին Թիֆլիսի ուէյներները։

«Օսկան Պետրովիչը գժոխքում» փարսը պէտք է ասած խրատական կարող է լինել անուս հասարակութեան համար, բայց չափազանց զուարճալի ընդհանրապէս ամեն մէկի համար։ Պ. Տէր-Դաւթեանը փուրոր հանեց այդ դերում, մանաւանդ երբ գժոխքում հանդիպած դանդան մարդոց բարեները արեց Բաքուից և Բալախանուց՝ ակնարկելով առօրեայ և նորագոյն դէպքեր։ Չմոռանանք յիշել, որ ծափահարութիւններից համակրական ցոյցերից զատ՝ մի նուէր էլ ոսկեայ տաղանդաւոր կոմիկը։ Երկու խօսք վերնայարկին։ Այս յարկը չատ անկարգ էր պահում իրեն. երբ մէկին ծափահարում են՝ նրանք սուլոցով ուզում են լռեցնել, առանց հասկանալու, որ դերասանը կարող է իր հասցէին ընդունել այդ սուլոցը և միանգամայն վրհատուել։ Մ'թէէ գեռ չը գիտեն, որ սուլելը ոգևորութեան և համակրութեան նշան չէ, այլ հակակրութեան։

Շմ. Խաչատրաժեան

Բաքու, 12 յուն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՒՐՔԻԱ

—

«Mémorial Diplomatidué»-ի տեղով, Կ. Պոլսում այս օրերս սուլթանի հրամանով նախագահութեան արտաքին միջոցներ են ձեռք առնուած, որովհետև ելզըզ-Ռէօշիում տեղեկութիւններ են ստացուած, թէ տալթանի կեանքի դէմ ուղղուած մի ընդարձակ դաւադրութեան հետք է գտնուած։ Բայց միևնոյն ժամանակ պնտեղ կազմում են, որ այդ բանը սուտ տպաքել են պալատականները, որոնք ուզում են ճնշում գործել սուլթանի վրայ։

—Անգլիան Թիւրքիային նախագուշացնում է գերմանացիների Փորը Ասիայում ունեցած գործունէութիւնից։ «Standard»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաւատացնում է, որ Անգլիան սուլթանին մի յուշագիր է ուղարկել, որի մէջ ցոյց է տալիս այն վտանգը, որ սպառնում է Թիւրքիային գերմանացիների գործունէութիւնից, մանաւանդ Հոնիայի գաւառում, ուր նրանք ամրողջ գաղութներ են հիմնում։ Գերմանացիները, ասուում է յուշագրի մէջ, այն աստիճան առաջ կըզնան, որ Փորը Ասիայումն ևս կանեն նոյնը, ինչ որ արեցին Չինաստանում։ Թղթակիցը հաւատացնում է, որ այդ յուշագիրը սուլթանի վրայ աղդել է, և նրա մէջ թէևրահաւատութիւն է ծագել գէպի գերմանացիները։

ԴՐԱՑՓՈՒՍ-ԷՍՏԵՐՀԱԶԻ ԴՈՐԾԸ

—

Դժուար է մի առ մի թուել այն բոլոր բարդութիւնները, որոնք պիտի փոխարինեն Էստէրհազիի գործին, որը կարելի էր վերջացած համարել. գաս է բացւում Զոլային, Պիկարի, Մատիէ Դրայֆուսի, Ռէնախի, Չերքէ-Կեսաների և ուրիշ չատերի դէմ։ Քաջամարդիկ Զոլային, որի կողմն է բոլոր խելացաս մարդկանց համակրութիւնը, մինչև երկու տարի ժամանակով բանտարկութիւն է սպառնում, եթէ նրան մեղաւոր ճանաչեն. սակայն նա պատրաստ է ապացուցելու, որ ինքը չի զրպարտել։ Դրա համար երդուեալներին պէտք է յանձնուեն Դրայֆուսի և Էստերհազիի գործի բոլոր դոկումենտները։ Հասկանալի է, որ միզապղանքից զերծ չի մնալ և «Aurore» լրագիրը, որը տպել էր Զոլայի նամակը։

Դաոի կը մատնուի նաև Կլեմանսոն։ Նա գրում է։ «Ասում են, որ այն բոլոր անձերը, որոնք յարուցել են այս գործը, դաոի կը մատնուեն։ Բրաւ, Դրայֆուս, Պիկար, Լաբլուա, Չերքէ-Կեսաներ,—ամենը պէտք է կանգնեն երդուեալների դատաստանի առաջ։ Ես խոստանում եմ դատարանին ներկայացնել իմ եղրակացութիւնը, որը կը կարզացուի ոչ դռնփակ։ Այդ մեծ օրն ամեն ինչ կը բացատրի։ Ռիվարիի էքսպերտները պէտք է հրապարակով խօսին, փոխանակ ամօթալի կերպով թագնուելու։ Պիկարը դուրս կը գայ իր արգելարանից, որպէս զի խօսի իրրև վկայ։ . . Ուզում էին լռեցնել, այժմ կը խօսեն։ Սակը էին տալքել, այժմ ճշմարտութիւնը լոյս աշխարհ կը գայ»։

200 գիտնականներ, նկարիչներ և գրողներ մի բողոքագիր են հրատարակել, որով բողոքում են ընդհանրապէս 1894 թ. Դրայֆուսի գործում կատարուած զանցառութիւնների դէմ։ «Մենք ստորագրողներս,—ասում են նրանք,—բողոքում ենք 1894 թ. դատաքննութեան իրաւարանական ձևերը խանգարելուն և այն խորհրդաւորութեան դէմ, որով պատուած էր Էստերհազիի գործի դատավարութիւնը։ Մենք պահանջում ենք վերաքննել Դրայֆուսի գործը»։

Նէատլի փոստաբաններն ընկերութիւնը մի հեռագրով իւր համակրութիւնն է յայտնում Զոլային։ Նոյնպէսի մի համակրական հեռագիր Զոլան ստացել է և Բրիւսելի ուսանողութիւնից։ Մինչդեռ փրանսիացի տարապլուխ ուսանողները «խմբում են» իրենց հռչակաւոր գրողի վրայ...

ՀԵՌԱԳՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 11 յունուարի. - Այն լուրը, թէ Զինովիևը գործում է յունաց արքայորդի Գէորգին Կրետէի նահանգապետ նշանակելու օգտին, այստեղի դիւանագիտական շրջաններում ուղղում են այն մտքով, թէ Զինովիևը սուլթանի մօտ ունեցած վերջին ունկնդրութեան ժամանակ յայտարարել է, որ եթէ Թիւրքիան առաջարկութիւն անի արքայորդի Գէորգի օգտին, Ռուսիան պատրաստ է պաշտպանել այդ առաջարկութիւնը պատուէրների առաջ.

ՊԱՐԻԶ.—Երբ Բրիսոնը հեռացաւ նախագահական աթոռից, և ընդհարումն, ըստ երևոյթին, աւելի լրջի բնաւորութիւն սկսեց ընդունել, կողմնացոյներում մի վաչա գորք երևաց առանց դէնքի. բայց չատ պատգամաւորների բողոքի պատճառով, դինուորները հեռացան։ Երբ նիսաը գաղարեցուց, հրաման տրուեց հատարակութեանը հեռացնել վերնայարկներից, ուր հայհոյում և կռւում էին, իսկ մի քանի լրագրողներ մինչև անգամ իրար հարուածեցին. կողմնացոյներում նոր ընդհարում տեղի ունեցաւ Բեօրնի և Դեկիի միջև. Վերջինս փորձեց Բեօրնի գլխովը տալ թանաքամանը, ապտակելով. «Սրիկայ». Այդ տեսարանին ներկայ եղողները միջամտեցին և խանգարեցին սուր ու դմփոցը. Ասում են, որ Ժորէսն ու Բեօրնին իրար մարտահրաւէր են ուղարկել. Վերնայարկերի հատարակութիւնը ստիպուած էր հեռանալ Բուրբոնեան պալատից և ապատել փողոցում նիստի վերջանալուն. Բրիսոնի պահանջմամբ, բոլոր խմբերը հաւաքուելին քննելու այն

հասար կրօնք է պէտք»։ Նոր բան չէ այս։ Հռոմի մէջ հեթանոս քաղաքագէտներն էլ այն ժամանակ այդպէս էին բանտածում, երբ քրիստոնէութիւնը սկսած էր նոր ծնանիլ։ Աւանդ խօսելու այն բարձր նիրչնչմանց վրայ, որ նրան են պատկան բոլոր գեղարուեստները, բաւական է ասել, որ կրօնքը մխիթարիչ է բոլմաթիւ մարդկանց և մինչև այսօր էլ տակաւին շատ են այն հոգիները, որոնք նրա մէջն են գտնում ապնուամութեան և զօրութեան մի սկզբունք. հետևաբար, այդ բոլորից յետոյ, մենք չէինք ցանկալ նրան մի և իսկ անտեղի հարուած տալու։ Բայց այս էլ պիտի ասել, որ հաւատացեալները միայն իրաւունք ունին խօսելու կրօնի անհրաժեշտութեան մասին։ Չի նրանք կրօնի մէջ խեղճ մարդկանց գործածուելու համար՝ բայի պատրանքից ուրիշ բան էլ են տեսնում։ Որովհետև նրանք ցանկանում են ամէնին իրենց այն լաւագոյն մտածումները հաղորդել, որոնցով նրանք ապրում են և ինչ որ նրանց համար ամենաարժէքը աղբիւրից քաղուած ճշմարտութիւն է։ Իսկ ինչ վերաբերում է քաղաքագէտներին և կինոպատկառ ճարպիկներին, որոնք ժողովրդի համար մի կրօն են ուզում, որ իրենք իսկ պաշտում, ահա նոյն իսկ պրոնք են կրօնը ծաղրողը և բոլորովին նուաստացնողը։ Սրանց Աստուածը՝ պաշտպան է սեպհականութեան, մի տեսակ սահմանադրական թագաւոր, բուրժուազիայի ատրիկանը, որ միջամտում է կուսակցական, անհատապետական և պատեհականների կռիւներին։ Ահա այդ կիրպով ներկայացրած Աստուածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ծիծաղելի խրատիչակ, որ անուանաբկում է իւր յաիչատակած անունը։

Թողնենք, որ Աստուած ինքն իրեն պաշտպանուի։ Ո՛չ մի բան չի կարող հիմնուիլ սուտի՛ան և կեղծաւորութեան վրայ։ Կրօնքը բարոյական կեանքի սկզբունք է եղած միայն այն ժամանակ, երբ նա բարձր մտքերի անկեղծ և անմիջական հաւատալիքն է եղած։ Խաբուած լինելու հրէշանկութիւնը մրքան որ մեծ լինի, սակայն ժողովուրդը մերժում է այդ բարիքը, նա ճշմարտութիւն է խնդրում, այն ճշմարտութիւնը՝ որ մերն է և որին մենք ենք հաւատում և որով մենք ապրում։

Նա իրաւունք ունի մեզնից այդ ճշմարտութիւնը պահանջելու, որ, ի հարկէ, մենք չենք կարող մերժել։

Արդ, մեր այսօրուայ հաւատացեալը մեր նախահայրերի հաւատացածից բոլորովին տարբեր է։ Գիտութեան յառաջադիմութեան շնորհիւ ֆիզիքական աշխարհի ըմբռնումն ձեռնհասացած է։ ճարտարապետութեան մեծ գիւտերը նիւթական կեանքի պայմանները փոխած են. նոր պէտքեր են ծնած, նոր յոյսեր երևան եկած։ Տատապետների պատասխանի պահանջումները օրինաւոր են։ Մի ընկերութեան իդէան այն պիտի լինի, որ նրա բոլոր անդամները բանականութեան բաժին ունենային։ Աւելի լաւ է ճիգ թափել ապագան բարելաւելու համար, քան թէ ժամանակը վատնել ափսոսալու մի անցեալ, որ այլ ևս չի կարելի վերատեղծել։ Ո՛չ և է ընկերութիւն չի կարող հոգևոր կեանք չունենալ և ոչ էլ անատրերը գտնել դէպի մանուկների կրթութիւնը, որոնք վաղը իւր գործօն անդամները պիտի լինեն և իրենց ճակատագիրը պիտի վճռեն։ Վատն դի այսօր, իրօք, աշխարհական ընկերութիւնը աւելի ընդարձակածաւալ է՝ քան կրօնականը, իսկ կրօնական ընկերութիւնը բաղկացած է բազմաթիւ ազանդներից, որոնք իրարու հակառակում ու նղովում են, մի կողմ թողնելով անատրերների բազմութիւնը. մեզ կը մնայ երևան բերել բանականութեան և յառաջադիմութեան արտադրած այն բարոյական ճշմարտութիւնները, որոնք ամեն վարդապետական և ծիսական խարսխութիւններից բարձր մնալով՝ կարող են անկախ ոպինները միացնել մի ընդհանուր գործնական հաւատքի մէջ։ Այս գործիս մէջ պէտք է աշխատինք հետևու մնալ յանձնապատասան վարդապետութիւններից, իւսուափենք հակընդդէմ մոլեռանդութիւնից, չանանք աւելի որոնել մեզ միացնող կապերը, քան թէ բաժանողները։—Չարթեցնենք

---

*) Պ. E. Boutroux-ն փիլիսոփայութեան պրոֆեսոր է Պարիզի համալսարանի մէջ։ Իւր բազմահատոր հետևնակութիւններով յարգելի պրոֆեսորը կարևոր տեղ ունի գրաւած ոչ միայն ֆրանսիական ժամանակակից փիլիսոփաների, այլ նոյն իսկ ամբողջ փիլիսոփայական աշխարհի մէջ։ Որքան մեզ յայտնի է, առաջին անգամ պ. Boutroux-ն եղաւ ցոյց տուողը, որ Սոկրատէսի դէը (դայմոն) ոչ մի առնչութիւն չունէր արեւելեան ժողովրդոց հասկացած դևերի կամ դանազան ոգիների հետ։

Թարգմ.

խղճմտանքը ինքնագիտակցութեան և իրաբանչիւրին իրեն արժանաւոր տեղը տանք։ Մի փիլիսոփայ, որ այս խնդիրներին նոյնքան չափաւորութեամբ է վերաբերւում, որքան և վեհութեամբ, պ. Է. Բուտրուն (E Boutroux) *) ցանկանում է որ մենք միշտ խորհրդակցենք մեծ փիլիսոփաների հետ. «Վատն դի նրանք իրենց բարոյական վարդապետութեանց հաստատման մէջ այլապէս չեն վարուած, քան սովորական մարդը». վատն դի այդ վարդապետութիւնները «ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամենաարժէք մտքերի մի դատողութիւն, բարոյական այն գաղափարների վերաբերմամբ, որոնցով մարդկութիւնը ապրում է»։ Ամենախոնարհ մարդը, որ իւր անելիքի վրայ ինքներեն հարց է առաջարկում, նա՝ որ տարակոյսի և անձկութեան մի ժամի մէջ կեանքի խնդիրը իրեն հանդիման է կացուցանում, տալա այդպիսիները իրենց

---

*) Պ. E. Boutroux-ն փիլիսոփայութեան պրոֆեսոր է Պարիզի համալսարանի մէջ։ Իւր բազմահատոր հետևնակութիւններով յարգելի պրոֆեսորը կարևոր տեղ ունի գրաւած ոչ միայն ֆրանսիական ժամանակակից փիլիսոփաների, այլ նոյն իսկ ամբողջ փիլիսոփայական աշխարհի մէջ։ Որքան մեզ յայտնի է, առաջին անգամ պ. Boutroux-ն եղաւ ցոյց տուողը, որ Սոկրատէսի դէը (դայմոն) ոչ մի առնչութիւն չունէր արեւելեան ժողովրդոց հասկացած դևերի կամ դանազան ոգիների հետ։

Թարգմ.

ոյժերի չափի մէջ նոյն բանն են անում, ինչ որ արած են Դէկարտ, Կանտ և Սալինօզա։ «Մենք դեկավարիչ սկզբունքեր ենք գտնում, աւելացնում է պ. Բուտրու, հաղորդակցութեան մէջ մանկլով մարդոց հետ ընդհանրապէս և ամենամեծ մտածողների ու բոլոր բանաւէրների հետ՝ մասնաւորապէս։ Թերևս գործնական բոլոր խնդասութիւնը ամփոփւում է հետևեալ յայտնի խօսքի մէջ. «Ես մարդ եմ և այն բոլորը՝ ինչ որ մարդկային է, ինձնից օտար չէ»։

Ռամկապետութեան մէջ կրթութեան խղէալը պիտի լինի ամեն անհատի մէջ զարթեցնել այն մարդկութեան գիտակցութիւնը, որ իւր արժէքն ու արժանապատուութիւնն է կազմում. որ նրան միանգամից թէ պարտականութիւն և թէ իրաւունքներ է տալիս, որ գերազանցին ինքը և իրեն աւելի մեծ իրերի հետ կապին և ազդիսով նրան մասնակցել են տալիս այն վեհագոյն բարիքներին, որով նա կարող է վայելել միայն այն պայմանով, որ անոնք ամենքին իւր անձնական չանքերովը։

(Վերջը միւս անգամ)

Թրանս. Թարգ.

Օր. Նուարդ Տիգրանեան։

Ռուսճուգ.

խնդիրը, թէ սխալ է արդեօք այսօր նորոգել նիասը. Կարծիքները տարբերուեցին. բայց որովհետև մեծամասնութիւնը վախենում էր, որ անկարգութիւնները կրկնուին, ապ պատճառով Բլիսսոնը վճռեց չվերանորոգել նիասը: Այսօր երեկոյեան, պատգամաւորների ժողովում մի քանի պատգամաւորներ վատ են վարուել. քննութիւն կըսկսուի:

ՊԱՐԻԶ,—Ալեման փողոցում մեծինգը սկսուեց առանց որևէ միջադէպի: Անվտանգական ճառախօսները կատավարութեանը յարձակումների են ենթարկում և ցնծութեան մէջ են ներկայ յուզումների պատճառով: Միտինգը վերջացաւ կէս գիշերին, և գահլիճից դուրս գալիս ոչ մի միջնադէպ չեղաւ:

ԱԼԺԻՐ. — Հակահրէական միտինգին հաւաքուած էր 6,000 հոգի: Խիստ ճառերը խօսուեցան: Դագանակներով զինուած մօտ 300 հրէայ խմբովին դիմեց դէպի միտինգի տեղը, բայց չտ մղուեցաւ: Հրէաները վիրաւորեցին երկու հոգու, որոնք նոտած էին կափէում, բայց նրանց դուրս արեցին նախ, քան նրանք կրկարողանային հանդիպել հակահրէական ցուցարարներին: Հակահրէականները այրեցին երկու քիօսկ և քարուքանդ արին տանեակ խանութներ: Պահանջուեց զօրքի միջամտութիւնը: Կարգը վերականգնած է:

ՊՐԱԳ. Գերմանական համալսարանի սենատը լուսաւորութեան մինիստրին տեղեկագրեց, որ իւր ամբողջ կազմութեամբ հրաժարական է տալիս,, որովհետև կառավարութիւնը իւր խոստման հակառակ չի պահպանում գերմանացի ուսանողներին և չի պաշտպանել այն որոշումը, որով այդ ուսանողներին թոյլ էր տրւում գունաւոր գլխարկներ ծածկելու:

ԲԵՐԼԻՆ.—«National Zeitung»-ը կրեաէլ խնդրի մասին գրում է. «Գերմանիայի և Ռուսիայի չահերը հակառակ չեն իրար այդ խնդրում: Գերմանիան Ռուսիայի դէմ ուղղուած չահեր չունի, և առհասարակ աշ մի սեպհական չահ չկայ: Գերմանիան աղնութեամբ նպաստել է եւրոպական խաղաղութեան պահպանման իրականացմանը և կարող է հանդստութեամբ վերջացնել Կրետէի գործը: Այն լուրերը, թէ Գերմանիան համաձայն չէ Ռուսիայի հետ, որ Կրետէի ընդհանուր նահանգապետ նշանակուի յունաց արքայորդի Գէորգը, նոյնքան առասպելական, որքան, օրինակ այն լուրերը, թէ ռուս-գերմանական համաձայնութիւնն է կայացած նախապատրաստական մի ջոյներ ձեռք առնելու՝ Բիւզանդական նոր կայսրութիւն հիմնելու համար»:

ԳՐՈԶՆԻ, 12 յունուարի. — Նաւթարդիւնաբերական «Ուսպենիա» գործարանում այրում են 20,000 պ. նաւթ պարունակող երկու աւազան: Հրդեհը չարունակուում է:

ԲՈՒԴԱՊԵՏ.— Ըստ պատճառով, որ հանգանական ընտրութիւնների ժամանակ գերմանացիները յաղթեցին, այսուհետ անկարգութիւններ տեղի ունեցան: Գերմանացիների տների վրայ քարեր էին նետում. մի քանի տների վերաբերուած է:

ՊԱՐԻԶ. — Մոնպարնասի թաղում մի մեծ մեծինգ տեղի ունեցաւ Դրեյֆուսի օգտին եղող ագիտացիայի դէմ բողոքելու համար: Խիստ միջոցներ են ձեռք առնուած: Մեծինգը խիստ յուզուած էր: Մեծինգը կազմող Գերենը յայտարարում է, որ այդ ժողովը գումարուած է ոչ թէ քաղաքական, այլ հայրենասիրական նպատակով, ապահովելու՝ բողոքելու օրքի վրայ գործուած յարձակումների դէմ: Անիշխանականները, որոնց աջակցում էր նաև մանել դահլիճը, սկսում են ապմուկ հանել: Մեծինգի փոխ-նախագահ ընտրուած Թիերեն պատրաստւում է խօսել, բայց նրան խանգարում են անիշխանականները նոր աղաղակներով: Երեք անիշխանականի դուրս են անում դահլիճից: Թիերեն առաջարկում է պահ յրել Սորսորուրգի արձանի պատուանդանի վրայ: Լսում են բացականչութիւններ. «Կեցցէ՛ զօրքը, կեցցէ՛ Փրանսիան»: Ցանկանալով, որ ոչ մի հնար չկայ ճառախօսութիւնները շարունակելու, Թիերեն առաջարկում է փակել նիասը, զնալ Համաձայնութեան հրապարակը և պահ դնել յիշեալ արձանի պատուանդանի վրայ: Պոակը գնում են կառքի մէջ, բայց ոստիկանութիւնը ցուցարարներին թոյլ չի տալիս հետևել կառքին խմբովին, ուստի նրանք ստիպուած են գնալ բաժան-բաժան:

ԱԼԺԻՐ. — Եգիպտների մի վաշտ մերկացրած սրերով յարձակում գործեց ամբոխի վրայ, որ աղաղակում էր «կորչի՛ն հրէաները», ուսրի էր մասնում հրէաների խանութները և ապրանքները վռնդոյն էր թափում: Ամբոխը յետ մղուեց, բայց յետոյ նորից և մի խմբուեց աղաղակելով «կեցցէ՛ զօրքը»: Զաւեը վիրաւորուած են. մի մարդ սպանուած է: Անկարգութիւնները չարունակուում են:

ԱԼԺԻՐ.—Սպանուածը երկու զաւակների հայր էր:

Յուղումը ծայրայեղ աստիճանի հասաւ: Անագին ամբոխ լցրել է փողոցները: գլխաւոր փողոցները բռնուած են զօրքերով:

Մի վիրաւոր, ամն Կագրոլ, մեռաւ ղեկասանը: Մի քանի ուրիշ անձեր սպասաիլի վիրքեր ստացան դաշոյնահարով: Երբ, ժամը 4-ին տարածուեց Կագրոլի մահուան լուրը, ժողովուրդը խիստ զբաղուեց: Հէնց այդ ժամանակ էլ տեղի ունեցաւ հրէաների վեց խանութների աւերումը, որոնց առաջին մասը տաշիղ գործերին, իսկ ապրանքները յափըշտակուեցան կամ այրուեցան: Այդ ժամանակն էր նոյնպէս, որ եգիպտները յարձակում գործեցին ամբոխի վրայ:

Ամբոխը ընդդիմութիւն է ցոյց տալիս: Ժանդարմերիան և ոստիկանութիւնը չեն կարողանում կարգ վերականգնել: Զանազան տղի թափառաշրջիկները վերանորոգում են աւերածութիւնները: Ոստիկանական մի քանի գործակալներ ճըխլուած են: Գործակալները ձերբակալում են հրէաների խանութներից ապրանք յափշտակող գողերին:

ԱԼԺԻՐ.—Երեկոյեան ժամը 10½-ին յուցարարները, ցնծագին աղաղակներով աղջունելով զօրքը նետ խուժեցին հրէաների տների պահեստները, պատռեցին մի քանի տապրակներ, ապրանքները փողոց նետեցին: Զուաներները սուիններով յարձակում գործեցին յուցարարների վրայ և ցրեցին նրանց, որի ժամանակ շատերը խեղումներ ստացան: Ցուցարարները վերստին հաւաքուեցին և այրեցին հրէաների պահեստները: Զօրքերը չատպում են այդտեղ հասնել: Հրդեհը, ըստ երևոյթին, սկզուեց հանպատրաստից: Պահապան զինուորներ են շրջում քաղաքում, ուր անդորրութիւնը վերականգնում է: Յուցարարները առաջ շարժուեցին դէպի Սենա-էժեն արուարձանը, ուր վնասեցին հրէաներին պատկանող մի քանի ամարանոցներ: Ժանդարմերիան թոյլ չը տուեց, որ յուցարարները վերստին Ալժիր: Քաղաքը հանդիստ է: Զօրքերը վերադառնում են զօրանոցները: Ձերբակալուած է 200 հոգի:

ԱԼԺԻՐ, 13 յունուարի.—Նահանգապետը, իմանալով, որ հրէաների խանութները աւերի են մատնուած, անցաւ բռնելուդ փողոցի երկարութեամբ, նրա առաջից գնում էին երկու թմբկահար, իսկ յետևից երկու զուաւ. նա յորդորում էր խաղաղ մնալ և կարգը չը խանգարել: Կամարների տակ հաւաքուած ամբոխն աղաղակում էր. «Հրաժարակէ՛ն տուէք»: Լսելիը կէսօրին վերադարձաւ նահանգապետական տունը զանազան աղաղակների ուղեկցութեամբ: Յուցարարների մէջ չատ սեղացիներ կան: Անկարգութիւնները խաղն եղող բոլոր օտարերկրացիներին անյապաղ կալաքսուին:

ՀԱԼԼԻՊՈԼԻ. — 600 հոգի ցոյցեր արին հայի թանկութեան պատճառով: Անկարգութիւններ եղան: Ձերբակալուած է 36 հոգի:

ԲԵՐԼԻՆ. — Ռայխստագի բիւջէի մասնաժողովում արտաքին գործերի մինիստր ֆոն-Բիւլովը ամենակարուկ կերպով յայտարարեց, որ նախկին կապիտան Դրեյֆուսի և գերմանական որևէ հատատութեան միջև երբէք ոչ մի յարաբերութիւն կամ կապ չի եղել: Բիւլովը հաստատեց միևնոյն ժամանակ վկայում է, որ Դրեյֆուսի գործը երբէք չի կարողացել խանգարել Գերմանիայի և Փրանսիայի միջև եղած խաղաղ յարաբերութիւնները: Կրետէի մասին Բիւլովը յայտարարեց, որ չահերը կայանում են միայն այն բանում, որ Կրետէն տարաձայնութեանց առարկայ չը դառնայ պետութիւնների միջև կամ ընդհատատաճ նոր անկարգութիւնների և խռովութիւնների՝ Արևելքում:

ՊԱՐԻԶ. — Պատգամաւորների ժողով: Դահլիճը լիքն է: Ամեն տեղ կենդանութիւն է տիրում, խօսում են: Բորեգարը պժգոհութիւն է, յայտնում, որ չարաթ օրը զօրքերը մի չամակային: Բլիսսոնը յայտարարում է, որ ինքն էր հրամայել մի քանի վհնուսը կանչել հասարակութեան վերնայարկից հեռացնելու: Ժողովը սկսում է չարունակել չարաթ օրուայ հարցապնդումը: Առաջարկը հաւանութիւն է գտած: Ժողովը յանդիմանում է կառավարութիւնը, որ Զոլայի դէմ դատ չի յարուցած գենեռալների դէմ նրա ուղղած մեղադրանքի համար: Կառավարութիւնը պէտք է թոյլ տայ, որ գործը կատարելագէս պարզուի: Կառավարութիւնը չի կարող արգիլել սպաներին ցուցմունքներ անելու Զոլայի գործի դատաքննութեան ժամանակ: Ճառախօսը հարցնում է, թէ զինուորական պատասխանի անդամների ձեռքին արդեօք Դրեյֆուսի մեղաւորութիւնն ապացուցող փաստաթղթեր և այդ փաստաթղթերն արդեօք հաղորդուած էին մեղադրեալին և նրա պաշտպանին: Մելինը պատասխանում է. «Մենք չենք կամենում այդ բանը քննել այստեղ»: (Ծափ.): Ժողովը բողոքում է անօրէնութեան և իրաւունքի խանգարման դէմ, յանդիմանում է, որ կառավարութիւնը վախկոտ է (բողոքներ) և յիշեցնում է Դեպուի դէմ Գերմանիայում հաղթ դատաքննութիւնը: Նա զարմանում է, որ Փրանսիայում չի կարելի դատել նոյնպիսի ազատութեամբ: Ճառախօսը մատնանիշ է անում էսթերհազիի գործը գնդիպակ քննելու անօրէնութեան վրայ: Ժողովը պնդում է, որ հատատակատութիւնն արդէն 16 տարի գանում է խոշոր գրամատէրերի ձեռքին: Նա յանդիմանում է մեծամասնութեանն այն բանի համար, որ նա հատատակատութիւնը յանձնել է զինուորական և կղերական յետադիմութեան ձեռքը, և վերջացնում է յայտարարելով, թէ ընկերվարականները կը պաշտպանեն հատատակատութիւնը: (Մի քանի ծափահարութիւններ): Մելինը հրաժարւում է պատասխանել, որովհետև,—ասում է նա,—կառավարութիւնն իրաւունք չունի արդարադատութեան տեղը բռնելու: (Ծափ.): Բորլէն յանդիմանում է կառավարութեանը, որ նա ուշացրել էր Կաւնհակին տուած իւր պատասխանը: Բորլէն ասում է, որ մինիստրութիւնը պէտք է պաշտօնապէս վատահութիւն յայտնէր, որ Դրեյֆուսը մեղաւոր է, և չպէտք է դատի մատնէր էսթերհազիին, որովհետև նա անմեղ է: Ի վերջոյ Բորլէն ասում է, որ մինիստրութիւնը դատ է բաց անում Զոլայի դէմ, որպէս զի հաճոյանայ աջակողմեաններին: Մելինը պատասխանում է, որ կառավարութիւնը չէր կարող բան հաղորդել Դրեյֆուսի գործի մասին, առանց ամենայանդուգն անօրէնութիւնը գործած լինելու: (Ծափ.): Մելինն ի վերջոյ կոչում է անում այն ամենքին, ով սիրում է Փրանսիան: (Ծափ.): Հակառատութիւնները վերջացած են: Մի քանի բանաձև է առաջարկուած հերթական գործերին անցնելու: Մելինն ընդունում է Բանսելի բանաձևը, որն և ընդունուած է 376 ձայնով ընդդէմ 133-ի: (Չերմ ծափ.): Նիասը փակուած է:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՌՈՒՍՁՈՒԻԴ, Գ. Պարթևեանին.—Ձարունակեցէք: Ընդհակառակութեամբ պիտի ընդունենք:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարզատար գնացքը № 1 (ուղղակի) *Բազուից Թիֆլիս* մեկնում է առաւ. 8 ժ. 30 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 15 ր., հասնում է Բաթում 8 ժ. 28 ր.

Մարզատար գնացքը № 3 (որ փոխում է Թիֆլիսում) *Բազուից Թիֆլիս* մեկնում է գիշ. 12 ժ. 6 ր., հասնում է Թիֆլիս եր. 7 ժ. 10 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 7 ժ. 55 ր., հասնում է Բաթում առ. 8. ժ. 28 ր.:

Մարզատար գնացքը № 2 (ուղղակի) *Բաթումից Թիֆլիս* մեկնում է առ. 8. ժ. 15 ր., հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 34 ր. մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 11 ժ., հասնում է Բազու առ. 6 ժ.:

№ 7 գնացքը *Թիֆլիսից Մ'խեթայով* մեկնում է օրուայ 3 ժ., հասնում է Մ'խեթայով եր. 6 ժ. 32 ր.

№ 8 գնացքը *Մ'խեթայովից Թիֆլիս* մեկնում է գիշ. 3 ժ. 45 ր., հասնում է Թիֆլիս առ. 7 ժ. 30 ր.

ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆ ՁԱՆԱՊԱՐՀ

(1897 թ. նոյեմ. 1-ից մինչև 1898 թ. մայիսի 1)

Թիֆլիսից հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 8 ժ., գիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկաղ միւս օրը եր. 7 ժ.: Վեց տեղ ունեցող կառքը (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 3 ժ. և հասնում է Վլադիկաւկաղ միւս օրը, եր. 5 ժ. 35 ր.

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 8 ժ. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 8 ժ. 15 ր.: Վեց տեղ ունեցող կառքը (առանց գիշերելու) մեկնում է եր. 7 ժ. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 8 ժ. 30 ր.

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՕՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՒՆՔԻՆ
(Սոլոլակ, Սադովա փողոց, № 64)
(սիպհատան տուն)
Հեռաթոռ № 230

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2 — 4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մանուսը ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 9—10 առաւօտեան—վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պետք տալ. վճարը որոշուում է ըստ պատակարգերի: Հանդերձները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունուողները վճարում—են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանուկները—1 ր. մինչև 5 ր. մի օրուայ համար: Երկունքից յետ աղաւելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան: Երթևեկ բոլոր հիւանդները պիտի և նրանք տասնում են ընդունելութեան ժամանակ ձրի: Հանդերձների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղացի ուսում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ
դասապիրը հատոր չորրորդ
ՍԱՀԱԿ ԲՀ. ՍԱՀԱԿՆԱՆՑ
(859) 5—1

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Գ Ր Ե Ց

ԴՈՒՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

Գինը 10 զրչ. կամ 80 կոպէկ
Կենդրոնատեղիք՝ Կ. Գօլիա, Ձարդարեան զրատուն, Ձաւմաքբզրլար, թիւ 50 և Թիֆլիս, կեդրոնական զրավաճառանոց:
5—4

ԹԻՖԼԻՍԻ ՓԱՂԱՓԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ այն անձերը, որոնք կամենում են կապալով վերցնել Թիֆլիս քաղաքում թափառական շներին կոտորելու և սպանուած կենդանիների դիակները հաւաքելու գործը, տեղեկութիւններ և կապալի պայմանները իմանալու և յայտարարութիւններ տալու համար կարող են դիմել քաղ. վարչութեան գրասենեակը ամեն նիստի օր, առ. ժամը 9-ից մինչև կէսօրուայ 2-ը:

3—1.
(861)

М. 52242 8—3

Թիֆլիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ՁԱՅՆԵՂ ՊԱՏԱՆԻՆԵՐ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ քառաձայն խումբ կազմելու համար, շաբաթ երեկոները և կիրակի ու նշանաւոր տօնական եկեղեցում երգելու համար: Ցանկալի է, որ երգիչները եթէ ոչ բոլոր եկեղեցում երգելու համար: Ցանկալի է, որ երգիչները եթէ ոչ բոլոր եկեղեցում երգեն, գոնէ մեծ մասը: Ցանկացողները կարող են դիմել նոյն եկեղեցու երեցփոխ Սարգիս Դամագեանցին:

Երեցփոխ՝ Ս. Դամագեանց
4—1
(860)

Дозв. цензурою, Тифлисъ, Января 14-го дня, 1898 Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12